

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

20 հոկտեմբերի 2023թ.
ք. Երևան

N 74-Ա

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԹԻՎ 4 ԸՆՏՐԱՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Ուսումնասիրելով թիվ 4 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի «Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ» թիվ 7-Ա որոշումը՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Պ Ա Ր Զ Ե Ց .

1. Թիվ 4 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի «Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ» թիվ 7-Ա որոշմամբ թիվ 4 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը միջնորդել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովին՝ ուժը կորցրած ճանաչել թիվ 4/21 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Լիլիթ Արմենի Խաչատրյանի և թիվ 4/46 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ՝ Ալետա Սարգսի Միքայելյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականները:

2. Թիվ 4 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ 4/21 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, պարզել է, որ այն պարունակում է Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների քվեարկության օրը կատարված գրառում առ այն, որ «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վստահված անձ Կարեն Սիմոնյանն արձանագրել է, որ ընտրողի անուն-ազգանվան դիմաց առկա էր ընտանիքի անդամներից մեկի ստորագրությունը, պարզաբանվելուց հետո, որ ընտանիքի մեկ այլ անդամ է ստորագրել, նա ստորագրեց սխալ ստորագրած անդամի փոխարեն՝ նախատեսված տողում»:

Թիվ 4 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը նշյալ որոշմամբ փաստում է. «որ թույլ է տրվել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամի կողմից ընտրողին ընտրողների ցուցակում գրանցելու սահմանված կարգի, ինչպես նաև Կենտրոնական ընտրական

հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 9-ի «Ընտրողների ցուցակի «Լրացուցիչ նշումներ» սյունակում կատարվող նշումների մասին» թիվ 126-Ն որոշման 2-րդ կետի խախտում:»:

Սույն վարչական վարույթի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ 4/21 ընտրական տեղամասի քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակները և պարզել է, որ 847 համարի ընտրողի՝ Թավաքալյան Կարինե Արսենի, տվյալների դիմաց և՛ «Անձը հաստատող փաստաթղթի սերիա և համար» սյունակում, և՛ «Ընտրողի ստորագրությունը» սյունակում, առկա է ստորագրություն:

«Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի (Այսուհետ՝ Ընտրական օրենսգիրք) 66-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամն ընտրողից վերցնում է քվեարկության կտրոնը, ընտրողների ցուցակում գտնում է ընտրողի տողը, *ընտրողը ստորագրում է իր տվյալների դիմաց՝ ընտրողի ստորագրության համար նախատեսված սյունակում* և իր անհատական կնիքն է դնում համապատասխան սյունակում, որից հետո անհատական կնիքով կնքում քվեարկության կտրոնը և այն փոխանցում ընտրողին:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 9-ի «Ընտրողների ցուցակի «Լրացուցիչ նշումներ» սյունակում կատարվող նշումների մասին» թիվ 126-Ն որոշման 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝

«1. Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամն ընտրողների ցուցակում տառասխալ կամ տեխնիկական վրիպակ հայտնաբերելու դեպքում (ընտրողի վերաբերյալ մնացած տվյալների համապատասխանության դեպքում), այդ մասին տեղեկացնելով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, ընտրողների ցուցակի «Լրացուցիչ նշումներ» սյունակում նշում է ճշգրտված տվյալը և ընտրողին հնարավորություն տալիս մասնակցել քվեարկությանը:

2. Տեղամասային ընտրական հանձնաժողովի ընտրողների գրանցման համար պատասխանատու հանձնաժողովի անդամը՝ տեղեկացնելով տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահին, տեխնիկական սարքավորման միջոցով գրանցված և քվեարկության կտրոն ստացած՝ քվեարկությանը չմասնակցած այն ընտրողին, որի տվյալների դիմաց ընտրողների ցուցակում առկա է ստորագրություն քվեարկությանը մասնակցելու վերաբերյալ, հնարավորություն է տալիս ստորագրելու ընտրողների ցուցակի «Լրացուցիչ նշումներ» սյունակում՝ իր տվյալների դիմաց՝ ստորագրության կողքին դնելով իր անհատական կնիքը:»:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը փաստում է, որ թույլ է տրվել Ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասով և Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 9-ի թիվ 126-Ն որոշմամբ սահմանված կարգի խախտում:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 4/21 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Լիլիթ Արմենի Խաչատրյանը ծանուցվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի ժամը 15:00-ի նիստի մասին, սակայն չի ներկայացել:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 4 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի միջնորդությունը՝ թիվ 4/21 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Լիլիթ Արմենի Խաչատրյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով, ենթակա է բավարաման:

3. Թիվ 4 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը, ուսումնասիրելով թիվ 4/46 տեղամասային ընտրական հանձնաժողովի գրանցամատյանը, պարզել է, որ այն պարունակում է Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների քվեարկության օրը կատարված գրառում առ այն, որ «Թիվ 4/46 տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը և քարտուղարն արձանագրել են, որ ընտրողների գրանցամատյանում թիվ 632 ընտրող Տեր-Մարկոսյան Մարինեն սխալմամբ ստորագրել է թիվ 633 ընտրող՝ Տեր-Մարկոսյան Վիոլետայի փոխարեն: Նույն անձը ստորագրել է նաև իր անվան դիմաց, որի պատճառով ունեցել են 2 ստորագրություն 1 ընտրողի դիմաց»:

Թիվ 4 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովը նշյալ որոշմամբ փաստում է. «որ թույլ է տրվել Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգրքի 66-րդ հոդվածի 8-րդ մասով սահմանված ընտրողների գրանցումն իրականացնող հանձնաժողովի անդամի կողմից ընտրողին ընտրողների ցուցակում գրանցելու սահմանված կարգի, ինչպես նաև Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 9-ի «Ընտրողների ցուցակի «Լրացուցիչ նշումներ» սյունակում կատարվող նշումների մասին» թիվ 126-Ն որոշման 2-րդ կետի խախտում»:

Սույն վարչական վարույթի շրջանակներում Կենտրոնական ընտրական հանձնաժողովն ուսումնասիրել է թիվ 4/46 ընտրական տեղամասի քվեարկությանը մասնակցած ընտրողների ցուցակները և պարզել է, որ 632 ընտրող Տեր-Մարկոսյան Մարինե Սուրենի և թիվ 633 ընտրող՝ Տեր-Մարկոսյան Վիոլետա Նիկոլայի տվյալների դիմաց «Ընտրողի ստորագրությունը» սյունակում, առկա են ստորագրություններ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովն արձանագրում է, որ թիվ 4/46 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Ալետա Սարգսի Միքայելյանը ծանուցվել է Կենտրոնական ընտրական հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 20-ի ժամը 15:00-ի նիստի մասին, սակայն չի ներկայացել:

Հիմք ընդունելով Թիվ 4 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի 2023 թվականի սեպտեմբերի 22-ի «Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրություններում տեղամասային ընտրական հանձնաժողովների գրանցամատյաններում քվեարկության օրն արձանագրված խախտումների վերաբերյալ» N 7-Ա որոշմամբ ներկայացված հանձնաժողովի եզրահանգումը

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը գտնում է, որ թիվ 4 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի միջնորդությունը՝ թիվ 4/46 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Ալետա Սարգսի Միքայելյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու խնդրանքով, ենթակա է բավարարման:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության ընտրական օրենսգիրք» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 51-րդ հոդվածի 2-րդ մասի 21-րդ կետով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է.

1. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թիվ 4/21 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ Լիլիթ Արմենի Խաչատրյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ թիվ 4 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի միջնորդությունը բավարարել և ուժը կորցրած ճանաչել Լիլիթ Արմենի Խաչատրյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

2. Երևանի ավագանու 2023 թվականի սեպտեմբերի 17-ի ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորված թիվ 4/46 տեղամասային ընտրական հանձնաժողովի անդամ՝ Ալետա Սարգսի Միքայելյանի՝ ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականն ուժը կորցրած ճանաչելու վերաբերյալ թիվ 4 ընտրատարածքային ընտրական հանձնաժողովի միջնորդությունը բավարարել և ուժը կորցրած ճանաչել Ալետա Սարգսի Միքայելյանի ընտրական հանձնաժողովում ընդգրկվելու որակավորման վկայականը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում նիստում հրապարակելու պահից:

4. Սույն որոշումը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ օրացուցային երեք օրվա ընթացքում:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ
ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ**

Վ. Հ ո վ ա կ ի մ յ ա ն